

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շտապ անհետաձգելի դեպք



Զանգ Շտապ Օգնություն



Բուժօգնության տրամադրում



Ապահովագրական ընկերության հետ կապի հաստատում

24 Ժամ



Վոխհատուցման հստակեցում



Վոխհատուցման իրականացում

2. Առողջական գանգատներ



Ապահովագրական ընկերության հետ կապի հաստատում



Փոխհատուցման հստակեցում





ուղորդում բժշկական կենտրոն



փոխհատուցման իրականացում



ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ



1. **ՏԱՐԲԵՐԱԿ 1 - ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**



- Նախապես անհրաժեշտ է զանգահարել գլխավոր գրասենյակ **011/012-560404** հեռախոսահամարով և ընկերության բժիշկ-փորձագետներին հայտնել Ապահովագրված անձի անուն, ազգանունը, ապահովագրական քարտի համարը, զանգատները, դրանց առաջացման ժամկետը, Ապահովագրված անձի նախընտրած բժկական կենտրոնը մեր ընկերության կողմից տրամադրված ցանկից, եթե այդպիսին առկա է:



- Բժիշկ-փորձագետները գրանցում են Ձեր հայտը, այնուհետև Ապահովագրված անձի համար հայտ է բացվում համապատասխան բժշկական կենտրոնում՝ այցելության ճշտված օրն ու ժամը Ձեզ հայտնելով:



- Օաձկույթի շրջանակներում բժշկական ծառայությունները ստանալուց հետո **1 (մեկ)** ամսվա ընթացքում անհրաժեշտ է մոտենալ մեր գրասենյակ հատուցման դիմում-հայտ լրացնելու կամ այն լրացնել, ստորագրել և կից փաստաթղթերով սկանավորված ուղարկել էլեկտրոնային փոստի medical@armeniainsurance.am հասցեով կամ ձայնագրվող հեռախոսազանգով հայտնել, որ սույն հայտի շրջանակներում այլևս փաստաթուղթ չի ներկայացվելու, և հայտը ենթակա է փակման:



- Ձեզ մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ փաստաթղթերը բժշկական կենտրոնից ստանալուց հետո առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Անձնական պահանջների կարգավորման վարչության կողմից հայտը կարգավորվում է (կազմվում է հատուցման/մերժման եզրակացություն), իսկ եզրակացության օրվանից 7 (յոթ) աշխատանքային

օրվա ընթացքում կատարվում է վճարում ինչպես բժշկական կենտրոնին, այնպես էլ Ձեզ, եթե եզրակացությունը դրական է և փաթեթում առկա է դեղորայքի կամ այլ ՀԴՄ կտրոններ, որոնք ենթակա են փոխհատուցման անմիջապես ապահովագրված անձին:



- Վճարման եղանակը ընտրում է Ապահովագրված անձը՝ բանկային հաշվեհամարին փոխանցելու կամ անձնագրային տվյալներով Արդշինինվեստբանկի տարանցիկ հաշվից ցանկացած մանսաճյուղում ստանալու տարբերակներից:



ՏԱՐԲԵՐԱԿ 2 - ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՉՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ, ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ



- Նախապես անհրաժեշտ է զանգահարել գլխավոր գրասենյակ **011/012-560404** հեռախոսահամարով և ընկերության բժիշկ-փորձագետներին հայտնել Ապահովագրված անձի անուն, ազգանուն, ապահովագրական քարտի համարը, զանգատները, դրանց առաջացման ժամկետը, Ապահովագրված անձի նախընտրած բժշկական կենտրոնը և բուժող բժշկի տվյալները:



- Օսովորյալի շրջանակներում բժշկական ծառայությունները ստանալուց հետո **1 (մեկ)** ամսվա ընթացքում անհրաժեշտ է մոտենալ մեր գրասենյակ հատուցման դիմում-հայտ լրացնելու կամ այն լրացնել, ստորագրել և կից փաստաթղթերով սկանավորված ուղարկել էլեկտրոնային փոստի medical@armeniainsurance.am հասցեով, որի ընդունման օրվանից առավելագույնը 2 (երկու) ամսվա ընթացքում ներկայացնել ստացված բժշկական ծառայությունների վերաբերյալ հետևյալ բժշկական և ֆինանսական փաստաթղթերը.

Բժշկական հիմնավորում

- ✓ *բժշկական տեղեկանք (բժշկական կենտրոնի կնիքով)*
 - ✓ *խորհրդատվական եզրակացություն (բժշկական կենտրոնի կնիքով), կամ*
 - ✓ *քաղվածք ամբուլատոր քարտից (բժշկական կենտրոնի կնիքով), կամ*
 - ✓ *էպիկրիզ (բժշկական կենտրոնի կնիքով),*
 - ✓ *պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ (անհրաժեշտության դեպքում):*
- Վնասի չափը հաստատող փաստաթղթեր, եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կողմից ինքնուրույն՝*
- ✓ *հաշիվ-պահանջագիր, կամ*

- ✓ *դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ ՀԴՄ կտրոն համապատասխան հաշիվ-ապրանքագրով*
- ✓ *բուժհաստատության կողմից համապատասխան ձևաթղթի վրա տրված տեղեկանք, որը հաստատված է (կնքված է) բուժհաստատության կողմից և հավաստում է բժշկական ծախսի չափը*
- ✓ *վնասվածքների և երրորդ անձանց մասնակցությամբ պատահարների վերաբերյալ համապատասխան լիազոր մարմնի եզրակացությունը/որոշումը:*



- Հայտի շրջանակներում վերջին փաստաթուղթը Ապահովագրված անձի կողմից ներկայացնելու օրվանից առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Անձնական պահանջների կարգավորման վարչության կողմից հայտը կարգավորվում է (կազմվում է հատուցման/մերժման եզրակացություն), իսկ դրական եզրակացության դեպքերում եզրակացության ամսաթվից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է վճարում :



- Շտապ, անհետաձգելի և կյանքին վտանգ սպառնացող պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պետք է **011/012-560404** հեռախոսահամարով կամ գրավոր, այդ թվում՝ medical@armeniainsurance.am էլեկտրոնային հասցեով Շնչառությանը տեղյակ պահի ախտորոշում կամ բուժում պահանջող իր առողջական վիճակի մասին՝ 48 ժամվա ընթացքում կամ հնարավորության դեպքում՝ անմիջապես: Նշված ժամկետը խախտելու դեպքում՝ ապահովադիրը կամ ապահովագրված անձը պարտավոր է գրավոր հիմնավորել ուշացման պատճառը: Առանց գրավոր հիմնավորման սահմանված ժամկետում Ապահովագրողին չտեղեկացնելը հիմք է հանդիսանում ապահովագրական հատուցման մերժման համար:



- Վճարման եղանակը ընտրում է Ապահովագրված անձը՝ բանկային հաշվեհամարին փոխանցելու կամ անձնագրային տվյալներով Արդշինինվեստբանկի տարանցիկ հաշվի միջոցով ցանկացած մանսաճյուղում ստանալու տարբերակներից:

Նախատեսված բժշկական ծախսերը հատուցվում են ողջամիտ չափով՝ պայմանով, որ իրականացված բուժումը և /կամ բուժական միջոցները իրավասու բժշկական մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ՝ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար:

Ապահովագրության տարածք՝ ՀՀ, ԼՂՀ: Կարևորվելու է կազմակերպության կողմից բուհական համակարգում առողջության ապահովագրության ծառայության փորձ ունենալը:

Տրամադրվող բժշկական ծառայությունների ցանկ.

1. ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում

- Ֆյուրորոգրաֆիա և թերապևտի գնում

2. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում

- PAP թեստ 35-ից բարձր տարիքի կանանց համար
- Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում մամոգրաֆիական հետազոտություն 35 -ից բարձր տարիքի կանանց համար

PSA թեստ 45-ից բարձր տարիքի տղամարդկանց համար

Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն

Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ),

Տեսողության ստուգում

Արյան ընդհանուր քնություն լեյկոբանաձևով

Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուռուլոգի խորհրդատվություն

Ընդ որում, ապահովել կանխարգելիչ հետազոտության անցկացումը առնվազն 4 բժշկական կենտրոններում:

3. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Շտապօգնության խմբի այց, այդ թվում՝ մասնագիտացված,
- Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում
- Անհետաձգելի բուժման դեղորայքի ապահովում

4. ԱՍԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Թերապևտի և նեղ-մասնագետների խորհրդատվություն, բուժման նշանակում
- Թերապևտիկ և վիրաբուժական հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում
- Լաբորատոր ախտորոշում՝ ըստ բժշկի նշանակման
- Գործիքային ախտորոշում՝ ըստ բժշկի նշանակման

5. ՄՏԱՑԻՈՆԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում և բուժում
- Թերապևտիկ և վիրաբուժական հիվանդությունների բուժում
- Ստացիոնար պայմաններում բուժում պահանջող հիվանդությունների բուժում (այրվածք, վնասվածք, թունավորում և այլն)
- Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում
- Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում: Անգիոգրաֆիկ հետազոտությունները, այդ թվում՝ կորոնարոգրաֆիա հետազոտության ,հատուցում նույնիսկ այն դեպքում, երբ այդ հետազոտությանը չի հաջորդում ծրագրով նախատեսված վիրահատական միջամտություն
- Վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների հատուցում
- Սրտանոթային վիրահատություններ և միջամտություններ.
 - ✓ Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով)
 - ✓ Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով
 - ✓ Աորտակորոնար շունտավորում
 - ✓ Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում)
 - ✓ Բարձր հաճախականության էլեկտրոաբլացիա
 - ✓ Աորտայի պրոթեզավորում (քրոնիկ պլանային դեպքերում՝ աորտայի անևրիզմա)
- Անոթային և նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ
- Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում
- Անհատական հիվանդասենյակի արժեքի հատուցում օրական 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ անկախ օրերի քանակից

6. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

- Ամբուլատոր բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության սրացման անսահմանափակ քանակի բուժում
- Ստացիոնար բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության սրացման անսահմանակ բուժում
- Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն

7. ՀՂԻՈՒԹՅԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ*

- Պետական ծրագրից դուրս հղիության հսկողություն
- Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում (այն դեպքում, երբ պաթոլոգիան սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կամ քրոնիկ հիվանդությունների արդյունք չէ)
- Հղիության ընդհատում՝ բժշկական ցուցումներով
- Հետծննդյան շրջանում հիվանդասեյակում կացության ծախսերի հատուցում՝ առավելագույնը 10 (տասը) օր՝ օրական 10,000 (տասը հազար) ՀՀ դրամի սահմաններում

* Ծածկույթն ուժի մեջ է մտնում առանց սպասման ժամկետի: Հատուցման ենթակա են հիվանդանոցներում հարմարավետ հիվանդասեյակների և անհատական խնամքի համար սահմանված վճարները մինչև 80,000 ՀՀ դրամ: Հատուցման ենթակա է հղիության ընթացքում պրոֆիլակտիկ նպատակներով նշանակված դեղորայքի և պատրաստուկների արժեքը:

8. ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- Ախտորոշում
- Աչքի տարատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով

9. ԴԵՂՈՐԱՅՔ

- Նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում
- Համագործակցող դեղատներից նշանակված դեղորայքը անվճար/ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն

10. Պլանային վիրաբուժություն

- Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն

11. ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԾԿՈՒՅԹ

- Բարդ դեպքերում՝ երկրորդ կարծիք ոլորտի առաջատար մասնագետների խորհրդատվությամբ. Եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի եզրակացության հետ, նա կարող է իր հաշվին անցնել 2-րդ հետազոտությունը: Եթե, արդյունքում, եզրակացությունները էապես տարբերվում են, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անցնել 3-րդ հետազոտությունը (տվյալ ոլորտում առաջատար մասնագետի մոտ), որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: Եթե 3-րդ կարծիքն էապես տարբերվում է 1-ին մասնագետի տրամադրած եզրակացությունից Ապահովագրողը հատուցում է 2-րդ կարծիքի հետ կապված ծախսերը, հակառակ դեպքում այն հատուցման ենթակա չէ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

- Շուրջօրյա բժշկական խորհրդատվություն,
- Անհրաժեշտ բժշկական ծառայությունների մատուցման կազմակերպում,
- Ախտորոշիչ հետազոտությունների և բուժման լավագույն տարբերակների մշակում,
- Խորհրդատվություն բժշկական հաստատությունների և մասնագետների ընտրության հարցում,
- Բժշկական սպասարկման հնարավոր լավագույն պայմանների երաշխավորում,
- Պայմանագրով սահմանված բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց հաշիվների ստացում և վճարումների իրականացում: Մատուցվող բժշկական ծառայությունների որակի, արդյունավետության և համարժեքության անընդհատ հսկողության ապահովում,
- Ամենամյա կանխարգելիչ բժշկական զննումների անցկացում, դրանց արդյունքում հիվանդությունների վաղ հայտնաբերում, բուժում և հնարավոր բարդությունների կանխարգելում,
- Ապահովագրական գումար՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար որպես ապահովագրական գումար է սահմանվում է 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամը:
- Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ չի կիրառվում:
- Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն.

2.1. Մինչ ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց զծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն

- 2.2. Ապահովագրական պատահարները, որոնց տեղի ունենալու մասին Ապահովագրված անձը (նրա օրինական ներկայացուցիչը) չի հայտնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատահարի մասին հայտնելն անհնար է եղել: Վերջին դեպքում Ապահովագրված անձը պետք է դա իրականացնի առաջին իսկ հնարավորության դեպքում
- 2.3. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը
- 2.4. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը
- 2.5. Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները
- 2.6. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ
- 2.7. Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բժավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր` Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ
- 2.8. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում` բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ
- 2.9. Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքները
- 2.10. Տուբերկուլյոզ
- 2.11. Հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, քրոնիկ երիկամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ
- 2.12. Շաքարային դիաբետ և դրա բարդությունները, այդ թվում դրա բացահայտման համար նախատեսված հետազոտությունները
- 2.13. Չարորակ ուռուցքային հիվանդությունների ոչ վիրահատական բուժում
- 2.14. Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և զենետիկ հիվանդություններ, այդ թվում` պոչուկի էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները (բուժում և հետազոտություններ, այդ թվում` բացահայտմանն ուղղված հետազոտություններ)

- 2.15. Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում, այդ թվում նշված հիվանդությունների/շեղումների բացահայտմանն ուղղված հետազոտությունները
- 2.16. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում
- 2.17. Բուժխնամք, բժշկի տնային կանչ
- 2.18. Հիվանդությունների պլանային և պահպանողական բուժում, բացառությամբ «Պլանային վիրաբուժություն» և «Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում» ծառայություններով նախատեսված դեպքերի
- 2.19. Քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ
- 2.20. Բացիլակրության, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը
- 2.21. Վերականգնողական բուժում, ֆիզիոթերապիա, լազերաթերապիա, կինեզոթերապիա, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, էներգաինֆորմատիկա, ցուրթթերապիա, էլեկտրասեղնաբուժություն, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլի մեթոդով և այլն
- 2.22. Վիտամինաթերապիա, բացառությամբ «Հղիություն և ծննդօգնություն» ծառայության, կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր,
- 2.23. Այն ծառայությունները, որոնք մատուցվում են կանխարգելիչ և ամողջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, ադիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն
- 2.24. Էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օգոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա
- 2.25. Էնդոպրոթեզավորում, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, երբ այլ ընտրանքային բուժում չկա, օրգանների փոխպատվաստում
- 2.26. Պրոթեզներ, իմպլանտներ, հարմարանքներ (օպտիկական ապակիներ, լինզաներ, շրջանակներ, լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ, այդ թվում՝ օրթոպեդիկ բարձ, օրթոպեդիկ ներքնակ, օրթոպեդիկ ներդիր, տակդիր, և այլն), բժշկական պարագաներ,
- 2.27. Սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում, սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում
- 2.28. Պլաստիկ և կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, մաշկի հիվանդությունների (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խավեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ

- 2.29.Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)
- 2.30.Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Ներոզներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետատաոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-ներոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ
- 2.31.Քաշի և խոսքի շտկում, տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, սեռի վիրաբուժական փոփոխում
- 2.32.Ատամնաբուժություն
- 2.33.Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում
- 2.34.Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Պայմանագրի ներքո կարող են ապահովագրվել միայն Ապահովադրի աշխատողները և Պայմանագրով ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամները՝ մինչև 65 տարեկան ամուսին/կին, մինչև 18 տարեկան զավակ: Ընտանիքի անդամների համար գործում են հետևյալ ապահովագրավճարները՝

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ
0-17	29 600 ՀՀ դրամ
18-40	33 000 ՀՀ դրամ
41-65	36 000 ՀՀ դրամ

- Ապահովագրական գումար՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար որպես ապահովագրական գումար է սահմանվում է 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամը:
- Ոչ պայմանական չփոխհատուցվող գումար՝ չի կիրառվում:
- Ապահովագրված անձ-աշխատողների նկատմամբ տարիքային սահմանափակում չի կիրառվում:
- Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:
- Նշանակված դեղորայքը կամ ախտորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են ծրագրում:
- **Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է յուրաքանչյուր շաբաթը 1 անգամ, պատվիրատուի կողմից տրամադրված տարածքում, ապահովի բժիշկ-խորհրդատուի ներկայություն, ով ապահովադիրներին խորհրդատվություն պետք է տրամադրի փոխհատուցման հնարավորությունների և ընթացակարգերի վերաբերյալ:**

*Մենք աշխատում ենք ՀՀ-ում արտոնագրված բոլոր Բժշկական Հաստատությունների հետ և համագործակցում ստորև նշվածների հետ:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ք.Երևան

1. «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Տիտոգրադյան 14
2. «Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Պարոնյան 21
3. «Շենգավիթ» բժշկական կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Մանանդյան 9
4. «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Մարգարյան 6
5. «Իզմիրլյան» գիտաբժշկական կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Հր. Ներսիսյան 19
6. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ ք. Երևան, Ֆանարջյան 76
7. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական հանալսարան» ՊՈԱԿ-ը ք. Երևան, Աբովյան 60 (բացառությամբ ատամնաբուժական ծառայությունների)
8. «Արամյանց» ՓԲԸ ք. Երևան, Չորափի 40
9. «Աստղիկ» ԲԿ ք. Երևան, Դանիել Վարուժան 28 ա
10. «Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Արմենակյան 13
11. «Արմա-մեդ» ՍՊԸ բժշկական կենտրոն ք. Երևան, Պարոնյան 21
12. «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի» գիտական կենտրոն ՓԲԸ ք. Երևան, Նորք 9-րդ փողոց 123
13. «Մեփլ Լիֆս Հայ-Կանադական Բժշկական կենտրոն», ք.Երևան, Արմենակյան 129
14. «Կանխարգելիչ Սրտաբանության կենտրոն», ք.Երևան, Պ.Սևակ
15. «Նորմեդ ԲԿ», ք.Երևան, Ներսիսյան 16/1
16. «Երևան ԲԿ», ք.Երևան, Բագրատունյաց 1
17. «ԿՀՄԻ-ԲԱԿ ԵՐԵՎԱՆ ԱԿ», ք.Երևան, Բագրատունյաց 1
18. «Ուրոլոգիայի կենտրոն» ԲԿ, ք.Երևան, Աբովյան 54
19. «Ավանգարդ» ԲԿ, ք.Երևան, Ներսիսյան 7
20. «Մայր Օպտիկս» ՍՊԸ, ք.Երևան, Գր.Լուսավորիչ 3/76
21. «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ, ք.Երևան, Ներսիսյան 7

22. «Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն», ք.Երևան,
23. «Մեդէքսպրեսս» ՍՊԸ, ք.Երևան, Վաղարշյան 22
24. Էլիտ–Մեդ բժշկական կենտրոններում
25. Սիրմեդ բժշկական կենտրոններում
26. «Սլավմեդ» ԲԿ, ք. Երևան, Բաղրամյան պ., 3-րդ նրբ., 4/2
27. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ, Հասցե՝ ք.Երևան, Հասարայան 9
28. «Բեսթ Լայֆ» ԲԿ ՍՊԸ, Հասցե՝ ք. Երևան, Ֆանարջյան 55

ՀՀ մարզեր

1. «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Եղվարդ, Չարենցի 196
2. «Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Աբովյան, Հատիսի 6
3. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Հրազդան, միկրոշրջան թաղամաս
4. «Սևանի հիվանդանոց» ՓԲԸ ք. Սևան, Լճափի 31
5. «Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Արմավիր, Շահումյան 3
6. «Մեծամորի հիվանդանոց» Արմավիրի մարզ, ք. Մեծամոր
7. «Աշտարակի ԲԿ» ք. Աշտարակ, Նարեկացու 61
8. «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 7
9. «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Գյումրի
10. «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Մասիս, Միսիթար Հերացու 1
11. «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Թալին, Քոթանյան 1
12. «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Արարատ, Խանջյան 59
13. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Գավառ, Ազատության 21
14. «Գավառի պոլիկլինիկա» ՊՓԲԸ ք. Գավառ, Շահումյան 14
15. «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Մարտունի, Գետափնյա 2/17
16. «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 34
17. «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Ալավերդի, Մայր-Նովա 20

18. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Վանաձոր, Կարմիր բանակի 8
19. «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ ք. Վանաձոր, Ամիրյան 10
20. «Ապարանի բժշկական կենտրոն ՓԲԸ ք. Ապարան, Գարեգին Նժդեհի 30
21. «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Բերդ, Ալեք Մանուկյան 25
22. «Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Նոյեմբերյան, 26 Կոմիսարների 1
23. «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Իջևան, Նալբանդյան 1
24. «Դիլիջանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Դիլիջան, Սայաթ-Նովա 7
25. «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Եղեգնաձոր, Վայքի 1
26. «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ ք. Վայք, Շահումյան 96
27. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Սիսիան, Չարենցի 14
28. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Գորիս, Տաթևացու 31
29. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Կապան, Մելիք Ստեփանյան 13
30. «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք. Քաջարան, Բակունցի 1
31. «Տավուշի ԲԿ» ՓԲԸ, ք.Տավուշ
32. «Մեղրու Տարածաշրջանային Բժշկական Կենտրոն» ՓԲԸ ք. Մեղրի, Գործարարների փող., 42 շենք

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐ

1. «Ա-ՍՏՈՄ ԱԿ», ք.Երևան, Կոմիտաս 26 (նաև իմպլանտացիայի մասով)
2. «Առիգ-Մեդ» ՍՊԸ, ՀՀ, ք.Երևան, Բարձրաբերդի 7/7
3. «Մակտուս Դենտ» ՍՊԸ, ք.Երևան, Բաֆֆու 19
4. «Լիդեր - Ֆ» Ա/Կ, ք.Երևան, Կոբյունի 7/1, Ուլնեցու 31-9, Մուրացան 113/2, Նոր Նորքի VI գ. 62.

ԴԵՂԱՏՆԵՐ

(դեղատոնային ցանցը կարող է ընդլայնվել տարածքային հարմարավետության նպատակով 30 և ավելի անձանց ապահովագրվելու դեպքում)

N	Դեղատուն	Հասցե	Հեռ.	Տերմինալ	Աշխատաժամերը
1	Բեյբի Լենդ N1	Վ.Վաղարշյան 17/13	+374(10)260114 +374(96)260114	Առկա է	Ամեն օր 9:30-22:00
2	Բեյբի Լենդ N2	Աղբյուր Սերոբի 7 շին. 67	+374(10)270370	Առկա է	Ամեն օր 10:00-19:00, բացի կիրակի օրից
3	Բեյբի Լենդ N3	Դավիթաշեն 3 թաղ 5/1, բժշկական կենտրոն	+374(43)260114	Առկա է	Շուրջօրյա